

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ

Ս.թ. դեկտեմբերի 9-ից 11-ը Երևանում կայանալու է «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» 3-րդ գլոբալ ֆորումը, որը նվիրված է լինելու կրթության, մշակույթի և թանգարանների միջոցով ցեղասպանության հանցագործության կանխարգելման հիմնահարցերին: Ֆորումը կազմակերպվում է ՀՀ ԱԳ նախարարության կողմից, ՄԱԿ-ի Ցեղասպանությունների կանխարգելման և պաշտպանելու պատասխանատվության գրասենյակի աջակցությամբ և Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի հետ համագործակցությամբ:

**Դեկտեմբերի 9-ին, ժամը՝ 19:00-ին**, Արամ Խաչատրյանի համերգասրահում տեղի է ունենալու **համերգ՝** նվիրված Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի ընդունման 70-ամյակին: Համերգը կազմակերպվել է ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից՝ Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հովանավորությամբ:

Համերգի բացման արարողությունը լուսաբանելու համար օպերատորները և լուսանկարիչները կարող են գրանցվել՝ **մինչև դեկտեմբերի 8-ը** [press@mfa.am](mailto:press@mfa.am) էլ. հասցեին ուղարկելով լրատվամիջոցի անվանումը և օպերատորի/լուսանկարչի անուն-ազգանունը:

**Դեկտեմբերի 10-ին, ժամը՝ 09:00-10:30-ը**, Մատենադարանում տեղի կունենա Ֆորումի **բացման** պաշտոնական արարողությունը, որի ընթացքում ելույթով հանդես կգան ՀՀ ԱԳ նախարար Չոհրաբ Մնացականյանը և Ցեղասպանության կանխարգելման հարցերով ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ադամա Դիենզո, ՄԱԿ-ի փոքրամասնությունների հարցերով հատուկ զեկուցող Ֆերնան դե Վարենը, ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի ժողովրդավարության, մարդու իրավունքների և հումանիտար հարցերի հանձնաժողովի զեկուցող Կիրիակոս Կիրիակոս-Հաջիյանին, ինչպես նաև Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի նախագահ Անրի Տերիոն և Չանգվածային ոճրագործությունների կանխարգելմանն ուղղված գլոբալ գործողության (GAAMAC) նախագահող Մո Բլիկերը:

Բացման արարողությունը լուսաբանելու համար օպերատորները և լուսանկարիչները կարող են գրանցվել՝ **մինչև դեկտեմբերի 8-ը** [press@mfa.am](mailto:press@mfa.am) էլ. հասցեին ուղարկելով լրատվամիջոցի անվանումը և օպերատորի/լուսանկարչի անուն-ազգանունը:

**Դեկտեմբերի 10-ին և 11-ին կայանալիք նիստերը հեռարձակվելու են ուղիղ եթերով, որը հասանելի է լինելու ֆորումի պաշտոնական կայքում և հետևյալ հղումով՝ <https://www.youtube.com/channel/UCQtnh5iqdoQNpSEJ75E129q/videos>:**

**Դեկտեմբերի 11-ին, ժամը՝ 15:30**, Երևանի կենտրոնում (Ներկայիս Մարշալ Բաղրամյան պողոտայի 1-ին փակուղի) տեղի կունենա **Ռաֆայել Լեմկինի անվան փողոցի** հանդիսավոր բացման արարողությունը: **Լրագրողների կողմից լուսաբանման կարգը սահմանվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից:**